ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«23» օգոստոս 2021թ. No 3187 - Ա

ԴԻՖԹԵՐԻԱՅԻ, ՓԱՅՏԱՑՄԱՆ, ԿԱՊՈՒՅՏ ՀԱԶԻ (ՈՉ ԲՋՋԱՅԻՆ) ԵՎ ՊՈԼԻՈՄԻԵԼԻՏԻ (ԻՆԱԿՏԻՎԱՑՎԱԾ) ԴԵՄ ԱԴՍՈՐԲՑՎԱԾ «ՏԵՏՐԱՔՍԻՄ» ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹՈՎ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2129-Ն որոշումով հաստատված «2021-2025 թվականների իմունականխարգելման ազգային ծրագիրը և իմունականխարգելման ազգային ծրագրի գերակա միջոցառումների ցանկը», պետական ծրագրի բաժին 2-ը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. 2021 թվականի սեպտեմբերի 1-ից 18 ամսական երեխաների վեցավալենտ՝ դիֆթերիա, փայտացում, կապույտ հազ, հեպատիտ Բ, ինակտիվացված պոլիոմիելիտ, հեմոֆիլուս ինֆլուենզա Բ տիպի բաղադրիչով համակցված պատվաստանյութը (այսուհետ՝ ԱԿԴՓ/ՎՀԲ/ՀԻԲ/ԻՊՊ) փոխարինել դիֆթերիայի, փայտացման, կապույտ հազի (ոչ բջջային) և պոլիոմիելիտի (ինակտիվացված) դեմ ադսորբցված՝ «Տետրաքսիմ» պատվաստանյութով:
2. Առողջապահության նախարարության մոր և մանկան վարչության պետի պաշտոնակատար Նունե Փաշայանին՝ ապահովել.
1) 2021 թվականի սեպտեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետությունում 18 ամսական երեխաների վեցավալենտ՝ դիֆթերիա, փայտացում, կապույտ հազ,

հեպատիտ Բ, ինակտիվացված պոլիոմիելիտ, հեմոֆիլուս ինֆլուենզա Բ տիպի բաղադրիչով համակցված պատվաստանյութը (այսուհետ՝ ԱԿԴՓ/ՎՀԲ/ՀԻԲ/ԻՊՊ) դիֆթերիայի, փայտացման, կապույտ հազի (ոչ բջջային) և պոլիոմիելիտի (ինակտիվացված) դեմ ադսորբցված՝ «Տետրաքսիմ» պատվաստանյութով փոխարինելու վերաբերյալ մեթոդա-գործնական աջակցության տրամադրումը:

2) Ազգաբնակչության շրջանում իրազեկման աշխատանքների կազմակերպումը:

3. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) գլխավոր տնօրեն Արտավազդ Վանյանին, ապահովել.

1) 2021 թվականի սեպտեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետությունում 18 ամսական երեխաների վեցավալենտ՝ դիֆթերիա, փայտացում, կապույտ հազ, հեպատիտ Բ, ինակտիվացված պոլիոմիելիտ, հեմոֆիլուս ինֆլուենզա Բ տիպի բաղադրիչով համակցված պատվաստանյութը (այսուհետ՝ ԱԿԴՓ/ՎՀԲ/ՀԻԲ/ԻՊՊ) դիֆթերիայի, փայտացման, կապույտ հազի (ոչ բջջային) և պոլիոմիելիտի (ինակտիվացված) դեմ ադսորբցված՝ «Տետրաքսիմ» պատվաստանյութով փոխարինելու վերաբերյալ մեթոդա-գործնական աջակցության տրամադրումը:

2) Ազգաբնակչության շրջանում իրազեկման աշխատանքների կազմակերպումը:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ ապահովել.

1) Սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Առաջարկել մարզպետարանների գլխավոր քարտուղարներին, Երևանի քաղաքապետարանի գլխավոր քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Համբարյանին, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներին (համաձայնությամբ)՝ ապահովել.

1) 2021 թվականի սեպտեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետությունում 18 ամսական երեխաների պատվաստումների փոխարինման կազմակերպումը Պատվաստումների ազգային օրացույցով նախատեսված 18 ամսական երեխաների շրջանում դիֆթերիայի, փայտացման, կապույտ հազի (ոչ բջջային) և պոլիոմիելիտի (ինակտիվացված) դեմ ադսորբցված «Տետրաքսիմ» պատվաստանյութով:

2) Ազգաբնակչության շրջանում իրազեկման աշխատանքների իրականացումը:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանին:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ